ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ

07 ապրիլի 2011 թվականի N 22 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐՈՎ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾԱԽՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու, առաջարկություններ և եզրակացություններ տալու նպատակով տեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ֆելիքս Ափինյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Ռոբերտ Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Կարինե Դովլաթբեկյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Միշա Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ հարցերով վարչության պետ

Աշոտ Փաշինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Գուրգեն Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման

ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

Ավթանդիլ Մարկոսյան - Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ:

2. Հանձնարարել հանձնաժողովին՝ յուրաքանչյուր 15 օրը մեկ հրավիրել հանձնաժողովի նիստ ու ստացված դիմումներին տալ համապատասխան ընթացք, կազմել արձանագրություն և ներկայացնել մարզպետին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

07 ապրիլի 2011թ.

ք. Իջևան